ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՊԸԱՇՁԲ-13/5

ք. Երևան 19.12.2013 թ.

ՀՀ քաղաքաշինության նախարարության <<Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկը, ի դեմս տնօրեն Հ. Սարգսյանի, որը գործում է ՀՀ քաղաքաշինության նախարարության <<Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Զարբախ>> ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Կ. Մուրադյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևանի Ռ. Իշխանյանի անվան թիվ 153 դպրոցի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը սույն պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

1) Նախագծման համար հիմք հանդիսացած նյութերի տեխնիկական բնութագրերը կազմել <Գնումների մասին> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2)ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3)ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիային, մեքենա-սարքավորումներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,

4)Պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով:

## 3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը Աշխատանքի կատարման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 4 օրինակ (Հավելված N 3):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 40 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է 10000000 (տասը միլիոն) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1** Պայմանագրի գնից՝ 10000000 (տասը միլիոն) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 20 թ. դեկտեմբերի 25-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծած ու փորձաքննություն իրականացրած անձինք պատվիրատուին վճարում են տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման և (կամ) դրա հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի քսան տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների չափին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի և սկզբնական նախագծի քսան տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների հանրագումարի չափին:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների Նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

7.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

Պ ա տ վ ի ր ա տ ու
ՀՀ ՔՆ <<ՔԾԻԳ>> ՊՀ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011086619, ՀՎՀՀ 02553861

Տնօրեն Հ. [illegible] ____________
(ստորագրություն)

Կապալառու
<<Չարբախ>> ՓԲԸ
Ք. Երևան, Մաշտոցի 24-24
<<Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի
խումբ>> ՓԲԸ <<Կոմիտաս>> մասնաճյուղ
Հ/Հ 2380029016310100,
ՀՎՀՀ 01800366

Տնօրեն Կ. Մուրադյան ____________
(ստորագրություն)

Հավելված 1
19.12.2013 թ. կնքված N ՊԼԱԾՁԲ-13/5
ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
Երևանի Ռ. Իշխանյանի անվան թիվ 153 դպրոցի վերակառուցման
նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների

| | | |
|---|---|---|
| 1 | Կատարման ենթակա աշխատանքների համառոտ բնութագիրը | Գոյություն ունեցող օբյեկտի (<Հայսեյսմշին և ԿՊԳՀԻ> ԲԲԸ կողմից 2013թ կատարած ուսումնասիրության արդյունքներով) վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում՝ ՀՀՇՆ II-6.02-2006 <Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր> -ի և ՀՀՇՆ I-4.02-99 <Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում: Հիմնական դրույթներ>> նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Կառույցի ընդհանուր մակերեսը կազմում է՝ 5200քմ: Օբյեկտի հզորությունը՝ 650 աշ.տեղ: |
| | Ճարտարապետահատակագծային և կոնստրուկտիվ լուծումներ՝ ըստ ոլորտային հատկանիշների | 12-ամյա միջնակարգ կրթության համակարգի արդի պահանջների ապահովում՝ ՀՀ կառավարության 13.12.2007թ թիվ 1490-Ն որոշմամբ հաստատված նորմատիվներին համապատասխան: Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի հասանելիության ապահովման լրացուցիչ կոնստրուկտիվ լուծումների նախատեսում: |
| 2 | Նախագծի տեսակը | Տեխնիկական վիճակի եզրակացության հիման վրա նախագծման ենթակա ծավալների չափագրում, աշխատանքային նախագծի /այդ թվում էսքիզային նախագծի/ կազմում՝ ՀՀ քաղշին նախարարի 29.11.2006 N273-Ն հրամանի համաձայն: Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում համակարգչային ծրագրով՝ կոնստրուկտիվ համակարգի համակարգչային հաշվարկի ապահովմամբ: |
| 4 | Այլ պահանջներ | Տեխնիկական պայմանների ստացում, Նախագծի համաձայնեցում շահագործողի, համայնքի ղեկավարի և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության (ԱԻՆ) տեսչության հետ:<br>Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության ձեռքբերում՝ ՀՀ կառ. 21.12.1998թ թիվ 812 և ՀՀ կառ. 06.05.2010թ թիվ 711-Ն որոշումների համաձայն :<br>Ընդ որում՝ մշակված փաստաթղթերի փորձաքննության ապահովում ըստ կից ներկայացվող տեխնիկական բնութագրի /հավելված Ա՝ որպես կնքման ենթակա պայմանագրի անբաժանելի մաս/:<br>Շինանյութերի և կոնստրուկցիաների գնահատում ՀՀ ֆինանսների նախարարության «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հրապարակվող համապատասխան տեղեկագրի և Նախագծային առաջադրանքով տրվող բնութագրերի համաձայն:<br>Նախագծում և Ծավալաթերթում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրում : Տեղական արտադրության և Հայաստան ներմուծվող շինանյութերի օգտագործում:<br>Աշխատանքների գնման պայմանագրով սահմանել, որ պետական գնման պայմանագրով նախատեսված աշխատանքների գինը 2013թ դեկտեմբերի երկրորդ տասնօրյակի ընթացքում փոխանցվում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար՝ վերջինիս կանխիկացումը Պատվիրատուի դրական եզրակացության առկայությամբ ապահովելու պայմանով: |

| Աշխատանքի կատարման ժամկետը | |
|---|---|
| սկիզբը | ավարտը |
| Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը | Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 100-րդ օրացուցային օրը ներառյալ |

Պատվիրատու
ՀՀ ՔՆ <<ՔՇԻԳ>> ՊՀ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011086619, ՀՎՀՀ 02553861

Տնօրեն Հ. Սարգսյան ______________
(ստորագրություն)

Կապալառու
<<Չարբախ>> ՓԲԸ
Ք. Երևան, Մաշտոցի 24-24
<<Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի
խումբ>> ՓԲԸ <<Կոմիտաս>> մասնաճյուղ
Հ/Հ 2380029016310100,
ՀՎՀՀ 01800366

Տնօրեն Կ. Մուրադյան ______________
(ստորագրություն)

Հավելված 2
19.12.2013 թ. կնքված N ՊԸԱԾՁԲ-13/5
ծածկագրով գնման պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| N | Աշխատանքի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2013 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1. | Երևանի Ռ. Իշխանյանի անվան թիվ 153 դպրոցի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 10000000 | 10000000 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

Պատվիրատու
ՀՀ ՔՆ <<ԲԾԻԳ>> ՊՀ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011086619, ՀՎՀՀ 02553861

Տնօրեն Հ. Սարգսյան ---------------------------
(ստորագրություն)

Կապալառու
<<Չարբախ>> ՓԲԸ
Ք. Երևան, Մաշտոցի 24-24
<<Արեքսիմբանկ-Գազպրոմբանկի
խումբ>> ՓԲԸ <<Կոմիտաս>> մասնաճյուղ
Հ/Հ 2380029016310100,
ՀՎՀՀ 01800366

Տնօրեն Կ. Մուրադյան---------------------------
(ստորագրություն)

Հավելված 3
19.12.2013 թ. կնքված N ՊԸԱԾՁԲ-13/5
ծածկագրով գնման պայմանագրի

Կատարող
______________________
______________________
գտնվելու վայրը ______________
հհ ______________________
______________________
հվհհ ______________________

Պատվիրատու
______________________
______________________
գտնվելու վայրը ______________
հհ______________________
______________________
հվհհ______________________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<____>> <<__________________>> 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ ________________________________________________
________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<____>> <<_______________>> 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն՝ ի դեմս ________________________________________________________
դեմս ________________________________________________________________ և Կատարողը՝ ի ________________________________________________________________, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Կատարողը __ _________ 20__ թ-ից __ _________ 20__ թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

| Գնման առարկայի անվանումը | Գնման առարկայի բնութագրի ցուցանիշը | Աշխատանքների կատարման ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| Ընդամենը | | | | |

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց
______________________
ստորագրություն
______________________
Ազգանուն, Անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց
______________________
ստորագրություն
______________________
Ազգանուն, Անուն
Կ.Տ.

Հավելված Ա

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

## նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության

| | |
|---|---|
| 1 | Նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության պարտադիր ապահովման հիմնավորում |
| | Փորձաքննությունն իրականացվում է Պատվիրատուի (կամ, պայմանագրով նախատեսված դեպքերում՝ Նախագծողի) և փորձաքննություն իրականացնողի միջև կնքվող պայմանագրի համաձայն՝ ՀՀ կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 812, ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի թիվ 711-Ն և ՀՀ կառավարության 1999 թվականի մարտի 30-ի թիվ 193 որոշումներին համապատասխան: |
| 2 | Փորձաքննության ներկայացվող փաստաթղթերի ցանկ |
| | • *Ելակետային տվյալներ /տեխնիկական բնութագիր, տեխնիկական պայմաններ, ճարտարապետահատակագծային առաջադրանք, ինժեներաերկրաբանական և շենքի /կամ մասնաշենքի/ տեխնիկական վիճակի հետազննության եզրակացություններ/,*<br>• *Նախագծային փաստաթղթեր /ընդհանուր բացատրագիր, գլխավոր հատակագիծ, ճարտարապետաշինարարական լուծումներ, ինժեներական սարքավորումներ, ցանցեր և համակարգեր, շինարարության և/կամ քանդման կազմակերպման նախագծեր, հիմնական շինարարական նյութերի, արտադրանքների կոնստրուկցիաների հավաք ամփոփագրեր/,*<br>• *Նախահաշվային փաստաթղթեր /Ամփոփ, օբյեկտային և լոկալ նախահաշիվներ/:* |
| 3 | Ծառայության մատուցման տեխնիկական առաջադրանք |
| | *Փորձաքննության միջոցով* ճարտարապետաշինարարական փաստաթղթերով սահմանված նախագծային լուծումների ՀՀ օրենսդրությանն ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին համապատասխանության ապահովում : |
| | *Փորձաքննության միջոցով Աշխատանքային Նախագծի* ներքո մշակված<br>1. գծագրական մասի և մասնագրերի,<br>2.նախագծային և նախահաշվային փաստաթղթերով ամրագրված ծավալների միմյանց համապատասխանության ապահովում: |
| | *Փորձաքննության միջոցով* նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջների խախտումներով մշակված քաղաքաշինական փաստաթղթերում նախագծային լուծումներին առնչվող շեղումների վերաբերյալ նախագծային կազմակերպության հետ համատեղ փոփոխությունների, լրացումների, այլընտրանքային լուծումների, լուծման առավել ռացիոնալ տարբերակների քննարկում՝ փորձաքննվող փաստաթղթերի պարտադիր լրամշակման պահանջով: |
| | Պատվիրատուի (կամ պայմանագրով նախատեսված դեպքերում՝ նախագծողի) և փորձաքննություն իրականացնողի փոխհամաձայնությամբ պայմանագրային գնի ձևավորում՝ ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կողմնորոշիչ չափաքանակների շրջանակներում: |
| | Պատվիրատուի տեխնիկական բնութագրով նախատեսված նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթի փորձաքննության ապահովում: |
| | Նախագծողի կողմից օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջների ու պայմանների կոպիտ և (կամ) պարբերաբար խախտումների կատարման դեպքում համապատասխան առաջարկությամբ միջնորդագրի ուղղում Պատվիրատուին : |
| | *Եզրակացության տրամադրում* հետևյալ բովանդակությամբ.<br>1. «Երաշխավորվում է Նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին», կամ |

| | |
|---|---|
| | 2. «Նախագիծը վերադարձվում է լրամշակման», կամ<br><br>3 «Նախագծային փաստաթղթերը չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին»: |
| | Վերը նշված պահանջների չկատարման դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատժամիջոցների կիրառում (<Վարչական իրավախախտումների մասին > ՀՀ օրենք. ՀՀ կառ.10.02.2011թ <Գնումների գործընթացի կազմակերպման մասին> N 168-Ն որ.,) |
| 4 | Ծառայությունների մատուցման ավարտի նախատեսում նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար պետական գնման պայմանագրով նախատեսված ժամկետներում: |

Պ ա տ վ ի ր ա տ ու
ՀՀ ՔՆ <<ՔՇԻԳ>> ՊՀ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011086619, ՀՎՀՀ 02553861

Տնօրեն Հ. Սարգսյան ---------------------
(ստորագրություն)

Կապալառու
<<Չարբախ>> ՓԲԸ
Ք. Երևան, Մաշտոցի 24-24
<<Արէկսիմբանկ-Գազպրոմբանկի
խումբ>> ՓԲԸ <<Կոմիտաս>> մասնաճյուղ
Հ/Հ 2380029016310100,
ՀՎՀՀ 01800366

Տնօրեն Կ. Մուրադյան---------------------
(ստորագրություն)

ԱՐԷԿՍԻՄԲԱՆԿ
ԳԱԶՊՐՈՄԲԱՆԿԻ ԽՈՒՄԲ

«Հայ-Ռուսական Արտահանման
Ներմուծման Բանկ - Գազպրոմբանկի Խումբ»
Փակ Բաժնետիրական Ընկերություն

«Կոմիտաս» մասնաճյուղ

Երևան, Կոմիտաս 16/1
Հեռ.ֆաքս.(37410) 320411; 320511
www.areximbank.am

19.12.13թ. №______
№ ԿՎ01/1340

ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ

18 դեկտեմբերի 2013թ.

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության նախարարության <<Քաղաքաշինական ՏԻԳ>> ՊՀ-ի (ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, ՀՎՀՀ 02553861) և <<Զարբախ>> ՓԲԸ-ի (Մաշտոցի 24-24, ՀՎՀՀ 01800366) (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև սույն թվականին կնքվելիք՝ Երևանի Ռ.Իշխանյանի անվան թիվ 153 դպրոցի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության կատարման N ՊԸԱԾՁԲ-13/5 պետական գնման պայմանագրից (այսուհետ՝ Պայմանագիր) բխող՝ Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) պատշաճ կատարման ապահովում:

2. Սույն երաշխիքով բենեֆիցիար է համարվում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը (այսուհետ՝ Բենեֆիցիար):

3. Երաշխիքով «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ն «Կոմիտաս» մասնաճյուղը (ք.Երևան, Կոմիտաս պող. 16/1) (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ ) Բենեֆիցիարին անվերապահորեն վճարել 10'000'000 (Տաս միլիոն) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջը ստանալուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում՝ առանց պահանջելու Երաշխավորված պարտավորությունների խախտելու հիմնավորումը: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի կողմից նշված հաշվեհամարին փոխանցման միջոցով:

4. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

5. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

6. Սույն Երաշխիքն ուժի մեջ է մտնում Բենեֆիցիարի կողմից Պրինցիպալի՝ «Առէկսիմբանկ -Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ն «Կոմիտաս» մասնաճյուղում բացված թիվ 2380029016310100 դրամային հաշվեհամարին Պայմանագրով սահմանված կանխավճարի գումարը 10'000'000 (Տաս միլիոն) ՀՀ դրամի չափով, ամբողջությամբ մուտք լինելու պահից և գործում է մինչև «01» հուլիսի 2014 թվականը:

7. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով:

8. Այն դեպքում, երբ Բենեֆիցիարը ներկայացրել է սույն Երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ, իսկ Երաշխիք տվող անձը Երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում Պահանջում նշված գումարն ամբողջությամբ, ապա Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարին իրավունք է վերապահում վճարման պահանջ ներկայացնելու Երաշխիք տվող անձին սպասարկող ցանկացած բանկ, Երաշխիք տվող անձի ցանկացած հաշվից անվիճելի և անառարկելի կարգով պահանջելու իրեն վճարել Երաշխիքի գումարը՝ ներկայացնելով սույն Երաշխիքի իր օրինակը:

9. Այն դեպքում, երբ Բենեֆիցիարը ներկայացրել է սույն Երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ, իսկ Երաշխիք տվող անձը Երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում Պահանջում նշված գումարն ամբողջությամբ, այդ թվում՝ երբ Բենեֆիցիարի կողմից սույն Երաշխիքի 8-րդ կետում ամրագրված իր իրավունքից օգտվելու դեպքում՝ Երաշխիք տվող անձի բանկային հաշվում առկա չեն բավարար միջոցներ, ապա Երաշխիք տվող անձը, իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Բենեֆիցիարին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար՝ Երաշխիքի գումարի 0.05 տոկոսի չափով: Ընդ որում,

Երաշխիքի գումարի վճարման իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Երաշխիք տվող անձի պատասխանատվությունը չի սահմանափակվում Երաշխիքի գումարով:

10. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի պահանջը, եթե պահանջը ներկայացվել է Երաշխիքի գործողության ժամկետի ավարտից հետո:

11. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին գրավոր տեղեկացնում է Բենեֆիցիարին:

12. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

13. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Մասնաճյուղի կառավարիչ Ա. Վարդանյան

Հաճախորդների սպասարկման

խմբի պետ-գլխավոր մասնագետ Ն. Ավետիսյան

Կ.Տ

Համաձայնագիր թիվ 1
«19» դեկտեմբերի 2013 թ. կնքված N ՊՀԱՇՁԲ-13/5 պետական գնման պայմանագրում
փոփոխություն կատարելու մասին

ք. Երևան 24 [illegible] 2014 թ.

ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման կրասենյակ» պետական հիմնարկը (այսուհետ՝ Հիմնարկ), ի դեմս Հիմնարկի տնօրեն Հ. Սարգսյանի, որը գործում է Հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Չարբախ>> ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Կ. Մուրադյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, ինչպես նաև հիմք ընդունելով Երևան քաղաքի Ռ. Իշխանյանի անվան թիվ 153 դպրոցի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման «19» դեկտեմբերի 2013 թ. կնքված N ՊՀԱՇՁԲ-13/5 պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.3 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին.

1.1.1 Պայմանագրով աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգել մինչև 2014 թվականի ապրիլի 30-ը՝ Պայմանագրի թիվ 1 հավելվածի <<ավարտը>> սյունակի <<*Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 100-րդ օրացուցային օրը ներառյալ*>> արտահայտության փոխարեն կարդալով <<*30.04.2014*>> արտահայտությունը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

2.2 Սույն համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու
ՀՀ ՔՆ <<Քաղաքաշինական ԾԻԳ>> ՊՀ

ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011086619
ՀՎՀՀ 02553861

Տնօրեն Հ. Սարգսյան

Կատարող
<<Չարբախ>> ՓԲԸ

Ք. Երևան, Մաշտոցի 24-24
<<Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի
խումբ>> ՓԲԸ <<Կոմիտաս>> մասնաճյուղ
Հ/Հ 2380029016310100,
ՀՎՀՀ 01800366

Տնօրեն Կ. Մուրադյան